

Կ Ո Մ Ի Տ Ա Ս

Վաստակաբեկ ժողովրդի տրտունջը կայ քո երգերում,
Կեանքի, սիրոյ յաւերժական շունջը կայ քո երգերում:

Հորովելները թախծալուր, զնգոցն ու փայլը գերանդու,
Մեր լեռնային արշալոյսի գով շունջը կայ քո երգերում:

Անմեղ ծիծաղը, որ ազի արտասուքով էր ոռոգուած,
Մեր արնացօզ ծաղիկների վառ փունջը կայ քո երգերում:

Զկայ գիշեր առանց լուսնի, չկայ հնձուր առանց եարի,
Մեր լեռնային արշալոյսի գով շունջը կայ քո երգերում:

Սրնգի ձայնը մեղրածոր, հաքսանիքի ազմուկն ուրախ,
Ազգատութեան ու կարիքի մռունջը կայ քո երգերում:

Պանդուխտների անդարձ ուղին, հաքսի մորմոքը մենաւոր,
Անհառ, անմար կարօտների մրմունջը կայ քո երգերում:

Դու տփնաւթեան սիրոյ երգիչ, դու խորթ էիր հին աշխարհին,
Ոսկաւ գահեր հաստատող մի տուն չկայ քո երգերում:

Դու հաբազատ ես իմ ճարտար ու տփնաջան ժողովուրդին.
Դարերի գանձը մեզ բերող կամուրջը կայ քո երգերում:

Ազբիւրի պէս կարկաչելով կ'երթաս քո ծովն ապագայի,
Անմահական գարուն ես դու, աշուն չկայ քո երգերում:

ՆԱՅԻՐԻ ԶԱՐԵԱՆ